ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 890Ա

29 օգոստոսի 2025թ. ք. Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՐԵԳՆԱԶ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Արեգնազ Հովհաննեսի Շահնազարյանի լիազորված անձ Վարդան Ֆելիքսի Առաքելյանի դիմումը՝ պարզվել է, որ.

- համաձայն Վաղարշապատ նոտարական տարածքի նոտար Ալեք Պարգևի Ավետյանի կողմից 20.04.2007թ. հաստատված թիվ 2593 սեղանաամատյանով գրանցված ըստ կտակիի ժառանգության իրավունքի վկայագրի, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված գույքի առանձին որակական քանակական բնութագրերի և դրա նկատմամբ առանձին իրավունքների /սահմանափակումների/ վերաբերյալ 06.05.2025թ. թիվ ԱՏ-06052025-04-0688 տեղեկանքի, «Էքսպերտ Դիալոգ» ՍՊԸ-ի /որակավորման վկայական թիվ 0378/ կողմից 02.12.2024թ. կազմված հատակագծի՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սպարապետ Վազգեն Սարգսյան փողոցի թիվ 109 հասցեում գտնվող բնակելի տունը պատկանում է Արեգնազ Հովհաննեսի Շահնազարյանին.
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասը կազմում է 0.03հա, որի վրա կառուցված է բնակելի տուն և բնակելի նշանակության օժանդակ շինություն.
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 0.1072հա սահմանազատված հողամաս.
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում կառուցված բնակելի տունը և ծածկը որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, կառուցվել են մինչև 2001թ. մայիսի 15-ը, ինչպես նաև չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և չի առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սպարապետ Վազգեն Սարգսյան փողոցի թիվ 109 հասցեում գտնվող բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շինության կառուցման և սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունը և ավել օգտագործվող 0.03հա մակերեսով հողամասը, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, համարել Արեգնազ Հովհաննեսի Շահնազարյանի /ծնված 19.05.1955թ/ սեփականությունը:

2. Բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 0.1072հա սահմանազատված հողամասից մնացած 0.0772հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը ենթակա է օտարման ուղղակի վաճառքի միջոցով ավագանու որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՈՂԱՄԱՍԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Հաստատում եմ
Վաղարշապատ համայնքի ղեկավարի պաշտոնակատար Ա. Մեխակյան
Կ.Տ.
կտ. «___» _____202 թ.

մադրված է_____ին _____« »_____201 թ. N_____որոշմամբ
Անուն, ազգանուն (հողամաս տրամադրողը)

Հողամասի իրադրական հատակագիծ | Մասշտաբ 1:1000 | Հողամասի հատակագիծ





Համաձայնեցված է՝

Համաձայնեցված է՝

Համաձայնեցված է՝

Համաձայնեցված է՝

Համաձայնեցված է՝

Համաձայնեցված է՝

ավելու վայրը	ք. Էջմիածին փ. Գ. Նժդեհի 109
ծկագիրը	04-002-0044-0001
կացման նպատակը	
տակային նշանակությունը	բնակավայրերի
ռական նշանակությունը հառատեսքը	բնակ. տան կառ. և սպասարկման
ռես (հա , քմ)	1372.0 քմ

Հողամասի

Երբարարձակի (տեսական) կետեր	Կոորդինատներ X	Կոորդինատներ Y	Գծային չափերը (մ)
1	4449052.83	8439373.75	15.91
2	4449068.64	8439375.58	55.36
3	4449123.49	8439383.08	7.30
4	4449125.83	8439389.99	18.85
5	4449107.53	8439394.49	12.45
6	4449095.23	8439396.39	5.32
7	4449090.13	8439397.89	5.24
8	4449090.94	8439403.07	28.37
9	4449062.71	8439405.86	10.89
10	4449060.42	8439395.21	5.23
11	4449058.58	8439390.31	0.97
12	4449057.62	8439390.47	17.39
1	4449052.83	8439373.75	

Սահմանակից հողօգտագործողներ

Հողամասը տեղանքում նշահատված է

Համաձայնեցված է իմաստներական սպասարկում իրականացնող մարմինների հետ (օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ մարդպետների և այլ լիազոր մարմինների հետ)

Կատարողներ	Ստորագրություն	Ազգանուն,անուն,հայրանուն
Պաշտոնը		
Պաշտոնը	Կ.Տ.	<<ԷՔՍՊԵՐՏ ԴԻԱԼՈԳ>> ՍՊԸ